ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/223

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միհեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Կիրակոսյանի (Լիազորագիր, տրված՝ 09.01.2019թ.)

Ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24348-18 գրությամբ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 21.12.2018թ. թիվ 01/61-26242 գրության հիման վրա, 27.12.2018թ. թիվ 27/26-3/24348-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար մշակութային միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքմերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին (այսուհետ՝ Ընթացակարգ) մասնակցության հայտ ներկայացրել նաև «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն, որի հայտը սակայն մերժվել է 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորությունների ունենալու հիմնավորմամբ:

Ընկերության կողմից ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել, որ այդ պարտավորությունները վերաբերում են «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուսման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճարներին, որոնց մասին Ընկերությունը հարկային մարմնի կողմից որևէ իրազեկում չի ստացել և այդ տեղեկությունը կարող է ձեռքբերվել միայն Ընկերության հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածքի տվյալներում առկա տեղեկատվությունից:

Ուսումնասիրության արդյունքում պարզ է դարձել նաև, որ ՀՀ ՊԵԿ նախագահի 19.07.2017թ. 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանված վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի ձևում «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուսման մասին» ՀՀ օրենքի համաձայն վճարման ենթակա դրոշմանիշային վճար որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն, նախատեսված չէ:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է Ընկերության չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/223 ընթացակարգի շրջանակներում 09.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչ՝ Ա. Կիրակոսյանի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.12.2018թ. թիվ 01/61-26242 գրությամբ հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի 03.12.2018թ. որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն:

Պատվիրատուն, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 03.12.2018թ. հարցում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ:

ՀՀ ՊԵԿ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 7 000 ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսը:

Ընկերությունը Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում, համապատասխան գրությամբ ներկայացրել է հետևյալ փաստաթղթերը. Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի քաղվածք և վճարման անդորրագիր, որի համաձայն՝ ՀՀ պետական բյուջեի

նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունը 7 000 ՀՀ դրամի չափով վճարվել է 29.11.2018թ.՝ հայտը ներկայացնելու հաջորդ օրը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/223 ընթացակարգի շրջանակներում 09.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ԱՄ-2018/223 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ԱՄ-2018/223 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 28.11.2018թ. հայտ է ներկայացրել «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2018թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 20-րդ կետի հիման վրա 06.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 7 000 ՀՀ դրամի չափով:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2018թ. նիստի ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24348-18 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 21.12.2018թ. թիվ 01/61-26242 գրությունը և կից փաստաթղթերը, «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի դիրքորոշումը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում են նաև, որ մասնակցի հայտը ներառում է միայն գնային առաջարկը: Ընդ որում, մասնակիցը գնային առաջարկ կարող է ներկայացնել, եթե բավարարում է հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների պահանջները: Գնային առաջարկը ներկայացնելը համարվում է սույն ենթակետով նախատեսված պահանջներին մասնակցի տվյալների համապատասխանությունը հավաստող հայտարարություն:

Կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) է ներկայացնում հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Նույն կարգի 20-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 19-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվություն չստացվելու դեպքում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը համարվում է այդ պահանջները բավարարող: Եթե կոմիտեի կողմից սույն կետով սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն. զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով

նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է, իսկ պայմանագիրը կնքված լինելու դեպքում կիրառվում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները: Եթե սահմանված ժամկետում կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության արդյունքում արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող լրացուցիչ տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 21-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին: Սույն կարգի 20-րդ կետով սահմանված հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով հրավիրված նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար կազմակերպվել է «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով 28.11.2018թ. հայտ է ներկայացրել «ԷԷԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.12.2018թ. ժամը 11:00-ի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից մի շարք չափաբաժինների մասով:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 20-րդ կետի հիման վրա 06.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«ԷԼԻՏԱ***

ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ժամկետանց հարկային պարտավորություն՝ 7 000 ՀՀ դրամի չափով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.12.2018թ. նիստի ժամը 11:30-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպես՝ հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետով սահմանվել է, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից 06.12.2018թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 28.11.2018թ., ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 7 000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Ընկերության կողմից Ընթացակարգի համապատասխան չափաբաժինների մասով ներկայացված վերջնական գնային առաջարկի (2-րդ չափաբաժին՝ 294 000 ՀՀ դրամ, 3-րդ չափաբաժին՝ 394 000 ՀՀ դրամ, 4-րդ չափաբաժին՝ 595 000 ՀՀ դրամ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված մեկ տոկոսի շեմը:

Միևնույն ժամանակ Ընկերությունը ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ***28.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) Ընկերության որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, համաձայն որի Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ չի ունեցել ժամկետանց հարկային պարտավորություններ:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով

նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտի թիվ 1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Աճուրդի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, միևնույն ժամանակ ՀՀ պետական եկամուտների կոմիտեից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց հարկային պարտավորություն: Միևնույն ժամանակ, ուսումնասիրելով 28.11.2018թ. դրությամբ (հայտը ներկայացնելու օրվա դրությամբ) «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ի որպես հարկ վճարողի՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարիների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ անձնական հաշվի քարտից քաղվածքը, արձանագրում եմ, որ նշված քաղվածքի համաձայն՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, հետևաբար առաջնորդվելով հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն բարեխղճորեն ենթադրել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ չունի ժամկետանց հարկային պարտավորություններ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ: Ուստի նշված հանգամանքը հաշվի առնելով, ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ն «ԵՔ-ԷԱՃԾՁԲ-19/4» ծածկագրով էլեկտրոնային

աճուրդի շրջանակներում թույլ չի տվել ստանձնած պարտավորության խախտում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.12.2018թ. թիվ 27/26-3/24348-18 գրությամբ «ԷԼԻՏԱ ԷՍՎԵ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00465515) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**